բարեկարգութեան համար։ Կամենիցի Հայք[1] այլ և այլ դարերու մեծ բարեգործութիւններ կ'առնեն հասարակաց բարւոյն համար. ոմն 'ի ԺԴ. դարու՝ եկեղեցի շինել կու տայ, ինչպէս Սինան Խութլուպէյ. Ներսէս ոմն 'ի ԺԷ դարու՝ ջրոյ ագուգաներ շինել կու տայ Կամենիցի մէջ, իւր հաշուին. Զաքարիա Խրիսթոֆովիչ միջնաբերդը կ'ամրացընէ իւր հաշուով, սոցա նման և այլ շատեր։

Ընդհանուր Լեհահայոց պատմութենէն կ'երևայ՝ որ Լեհաց կառավարութիւնն միշտ լաւ և խոհական կերպով վարուած է Հայոց հետ, և Հայք շատ անգամ իրենց երախտագիտութիւնը ցուցած են առ թագաւորս. այլ հասարակ ժողովուրդն՝ Հայոց ճոխութեան վրայ նախանձու աչք նայած է. որով կէս արդարացի և կէս հեգնական բառը, այսինքն քաչչալ, որ կը նշանակէ մեծաքսակ, գործածած են առ Հայս։ Սակայն զայս պէտք է խոստովանիլ, զոր և Լեհք լաւ կը ճանչնան, որ վաճառականու-

1. Կամենիցի Հայոց հարստանալուն պատճառն՝ արթուն տուրևառութիւնը և չափաւորեալ ծախքով խոհական դիւզատնտեսութիւնը կը համարի հնագէտն Ռոլլէ. միւս այլ պատճառ մի ևս կայ՝ որ ոմանց ականջին թերևս ախորժ չի հնչեր. այն է դերեաց վաճառականութիւնը, թաթարաց՝ Ռուսաստան և Լեհաստան արշաւած և կողոպտած միջոցին։ Քիեւի դիւանին մէջ ձեռքս անցաւ դատաստանական գործ մի Վոլինի գաւառին Վլադիմիր քաղաքը գրուած ԺԶ դարու (1579) յորում՝ խառն լեհ և ռուս լեզուով կայ գրուած Օվանէս Պոկտանովիչ կամենիցացի հայազգոյն 'ի Կաֆա (Ղրիմու) գնելը՝ Քուռիլ (Կիւրեղ) անունով ռուս իշխանին կինը, և ապա Էրկանը դարձընելը, մանրամասն պարագաներով։